

սառ լինէր իմ ձեռացս տաքութեամբ կը հալէր, իսկ ինք իմ ձեռքս կը սառցնէ»:

— Յովնան, ծռէ եւ այնպէս հետեւէ ինձ,— ըսաւ ծերը,— մի՛ շտկուիր մինչեւ որ ես քեզ իմաց չի տամ:

Եւ այնպէս մի փոքրիկ ժամանակ երթալէն վերջ, ծերուն յորդորով շտկուի ցան, եւ Յովնան զգաց, որ աւելի համարձակ շունչ կառնուր՝ թէպէտ միշտ գետնափորներ ու մէջ էին եւ ոչ նշոյլ կար, ոչ բնական եւ ոչ արհեստական լուսոյ: Բայց վերջապէս հասան այնպիսի տեղ մը ուր հեռուն նշոյլ մ'սկսաւ երեւալ եւ մտան ընդարձակ, լուսաւորուած սրահ մը, ուր ոսկեճոյլ աշտանակներ ու վրայ մեղրամոմեր եւ բազմաթիւ արծաթի կանթեղներ իրենց լոյսը կը ցոլացնէին, եւ հրաշալի արծան մը կանգնած էր պղնձէ պատուանդանի մը վրայ. այն համբաւաւոր ոսկիածին եւ ոսկիամօր Անահ տա արծանն էր նա՝ պաշտպանի հին հայրենեաց, եւ իւր աջ կողմը Վահագնի եւ ձախը Աստղկան արծաններ կանգուն էին, աս երեք արծաններուն պատուանդաններուն յեցեալ եռոտանի մը կար դարձեալ ոսկեճոյլ. չէր կարելի իմանալ թէ այս տաճարը՝ վասնզի իրօք տաճար մ'էր սա՝ իւր գմբէթովը, որու չորս կողմ դեռ ուրիշ փոքր գմբէթներ կային, գետնին տակն է՞ր, թէ գետնէն դուրս բարձրացած. վասնզի պատերը բոլոր արծաններով եւ քանդակներով էին զարդարած եւ վրայի գմբէթէն կախ էր ահագին ապակեայ ճրագարան մը, ո՛յ գիտէ ուստի՞ եւ ո՞ր հեռաւոր երկրէ բերուած այդտեղ այդ անդնգախոյզ աստուածութեանց պաշտօնը եւ նսեմացեալ խաւարը շքաւորելու համար:

Այս տեսարանը յանկարծ այնչափս զարմացուց եւ շլացուց զհովնան, որ եւ ոչ զգաց թէ ինչպէ՛ս եւ երբ հեռացաւ իրմէ իւր ծեր առաջնորդը, ուստի սկսաւ նայիլ եւ զննել այդ հին յիշատակաց եւ արուեստներ ու հրաշալիքը, որոնց նմանութիւն կը մտաբեր թէ ո՛ր տեսած էր ինք, ի Կոստանդնուպոլի՞ս, թէ ի Բաղդատ:

Եւ երբ այս մտածութեան վրայ էր, յանկարծ իւր ուշադրութիւնը շարժուեցաւ, Վասնզի երգերու ձայներ սկսան լսուիլ, եւ տաճարը